# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2022-2027ԹԹ.
# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար ______________ Ք.Նիկողոսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 17 նոյեմբերի 2022թ. թիվ 77-Ա որոշմաբ

ՍՊԻՏԱԿ, 2022 թ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ
1. Պատմական և մշակույթային արժեքներ
2 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ
3. Տեղական ինքնակառավարման մարմինները, նրանց գործունեության ուղղությունները
4. Գործող կազմակերպություններ
5. Առողջապահական հաստատություններ
6. Աշխատանք և սոցիալական ծառայություն
7. Քաղաքաշինություն
8. Ջրամատակարարում և ջրահեռացում
9. Էներգամատակարարում
10. Գազամատակարարում
11. Աղբահանություն, սանիտարական մաքրում
12. Համայնքի հողային ֆոնդ
13. Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն
14. Բնակտնտեսություն
15. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն
16. Հանգստի գոտիներ,զբոսայգիներ,խաղահրապարակներ
17. Աղետների ռիսկի կառավարում
18. Գյուղատնտեսություն
19. Գովազդ,առևտուր և սպասարկում
20. Կրթություն
21. Մշակույթ, ֆիզկուլտուրա և սպորտ
22. Համայնքի ռազմավարությունը, նպատակները
23. Համայնքում իրականացվող ծրագրեր
24. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրեր
25. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում
26. Եզրափակում

**Հավելվածներ**

1. Համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներ

2. Համայնքի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի մշակման, քննարկման և հաստատման ժամանակացույց

3. Աղյուսակներ

# 1. Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Սպիտակ համայնքը հանդիսանում է խոշորացված համայնք համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացված ընտրությունների արդյունքները: Սպիտակ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Արևաշող, Արջիովիտ, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրակամուտ, Ջրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարաձոր: Համայնքի կենտրոն է հանդիսանում Սպիտակ քաղաքը:
Սպիտակը գտնվում է Վանաձոր–Գյումրի և Վանաձոր–Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկներում, Փամբակի հովտում, Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 19 կմ է, իսկ մայրաքաղաքից 97 կմ: Համայնքի վարչական տարածքը 61531.36 հա է: Սպիտակի տարածքը լեռնային է, հյուսիսում ձգվում են Բազումի, իսկ հարավում Փամբակի լեռնաշղթաները: Ռելիեֆն ունի էրոզիոն-դենուդացիոն կառուցվածք: Տարածքի երկրաբանական կառուցվածքը բարդ է, ձևավորված է նստավածքային հրաբխածին, ներժայթքային ապարներից՝ կրաքարեր, տուֆածին ապարներ, բազալտ ու ավազաքարեր: Երկրաշարժաբանական առումով տարածքը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի՝ աղետաբեր երկրաշարժի բարձր հավանականությամբ (9 և ավելի բալ) : Սպիտակի տարածքով անցնում է Թբիլիսի-Վանաձոր-Սպիտակ-Մասիս երկաթգիծը:
Սպիտակ համայնքի տարածքը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում: Ձմեռը մեղմ է, ամառը՝ չափավոր տաք: Ամենացածր ամսեկան միջին ջերմաստիճանը հունվարին է՝ -30C, նվազագույնը՝ -35C, ամենատաք ամիսը հուլիսն է՝ +38C է, առավելագույնը +40C: Միջին հաշվով 0C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը Սպիտակ քաղաքում կազմում է 270 օր: Տարեկան տեղումների միջին մակարդակը 500-550մմ է, գոլորշունակությունը՝ 900 մմ: Ձնածածկույթի միջին հաստությունը 18-20 սանտիմետր է, ձնածածկույթով օրերի թիվը՝ 75-80:
Սպիտակի տարածքը եղել է հին բնակատեղի, որի պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. IV-I հազարամյակներից: Սպիտակում, համանուն նախկին շրջանի Մեծ Պարնի, Ջրաշեն, Գոգարան, Արևաշող գյուղերում հայտնաբերված նեոլիթյան գործիքներն ու կենցաղային իրերը՝ քարե հատիչները, կացինները, դանակները, նետասլաքները, աղորիքները, արձանիկները և գտնված մյուս առարկաները վկայում են այդ ցեղերի հասարակական բարձր աստիճանը:
Սպիտակում՝ Սարդարի կոնդ բլուրում հայտնաբերվել են բրոնզե դարաշրջանի (ք.ա. 3-2-րդ հազարամյակում) բնորոշ առարկաներ՝ պղնձե և բրոնզե նետասլաքներ, դաշույններ, սև փայլեցրած կավախեցե ամաններ և այլ առարկաներ: Տարածքի բնակիչների կյանքը վերընթաց զարգացում է ապրել նաև ք.ա. 1-ին հազարամյակում, երբ այդ տարածքը մտել է Ուրարտու պետության կազմի մեջ (ք.ա. 7-րդ դար):
Երվանդունիների (ք.ա. 4-2-րդ դարեր) և Արտաշեսյանների (ք.ա. 2-1-ին դարեր) թագավորության ժամանակ նաև Սպիտակի այժմյան տարածքը եղել է Հայաստանի, ավելի ուշ՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի կազմում: 9-րդ դարավերջին մտել է Բագրատունյաց թագավորության, 972-1118թթ.-ը՝ Կյուրիկյան թագավորության, իսկ 12-րդ դարավերջից՝ Սելջուկյան թուրքերից ազատագրված հայկական հողերի հետ՝ Զաքարյանների իշխանապետության մեջ: 14-18-րդ դարերում Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի գավառակների հետ միացվել է Ռուսաստանին, տարածքը կոչվել է Համամլուի գավառակ և մտել նախ Լոռի-Փամբակի, ապա՝ Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքը մինչև 1949թ. կոչվել է «Համամլու» կամ «Համամլի», որը հավանաբար առաջացել է պարսկերեն «համամ» (բաղնիք) բառից: Համամլուի նոր անունը՝ Սպիտակ, կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ: Համամլուի շրջանը, որպես վարչական միավոր ստեղծվել է 1937թ. դեկտեմբերի 31-ին: Սպիտակը 1960թ.-ին ստացել է քաղաքի, 1971թ.-ին՝ հանրապետության ենթակայության քաղաքի կարգավիճակ: Համամլիում դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են ծխական դպրոցներ: Նախասովետական Համամլուն, բացի մի քանի դարբնոցից, ջրաղացներից ու ձիթահանքից, արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն չուներ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բնակավայրի արտադրական առաջին ձեռնարկությունը՝ պանրի գործարանը, կառուցվել է 1937թ.-ին: 1947թ. առաջին արտադրանքն է

տվել շաքարի գործարանը, որն արտադրական յուրաքանչյուր սեզոնում վերամշակում էր 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, արտադրում 14 հազար տոննա բարձրորակ շաքարավազ: Հետագայում կոմբինատի կարգավիճակ ստացած ձեռնարկության մեջ ներառված կիտրոնաթթվի արտադրամասի թանկարժեք արտադրանքն առաքվում էր ոչ միայն Խորհրդային Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան մի շարք երկրներ: Արտասահմանյան 21 երկիր (Ռումինիա, Իրաք, Վիետնամ, Մոնղոլիա, Թուրքիա, Կուբա, Մալի և այլն) և սովետմիության մի շարք խոշոր քաղաքներ էին արտահանվում «Հայվերելակմեքենա» միավորման մարդատար և բեռնատար վերելակներ: Այստեղ աշխատող բանվոր ծառայողների թիվը հասնում էր 700-ի: Գործում էր Հացամթերքի կոմբինատը, կարի արտադրական միավորումը, տրիկոտաժի, կոշիկի ֆաբրիկաները, ռետինատեխնիկական իրերի և հացի գործարանները: Մինչև 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Սպիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում, պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, թանգարան, մարզադաշտ, կապի հանգույց, տպարան:

Սպիտակցին երախտագիտությամբ է հիշում բարի կամք դրսևորած բոլոր երկրներին ու ժողովուրդներին, սփյուռքի մեր հայրենակիցներին, անհատ մարդկանց ու կազմակերպություններին, ովքեր իրենց անգնահատելի օգնությունն ու աջակցությունը բերեցին երկրաշարժի հետևանքների վերացման, ավերված քաղաքի վերականգնման գործին:

Բարեկամ ժողովուրդների օգնությամբ վեր հառնած Սպիտակն այսօրվա իր տեսքով, թաղամասերի անվանումներով ժողովուրդների բարեկամության իրական խորհրդանիշ է:

Չնայած նրան, որ Սպիտակում վերականգնողական մեծ աշխատանքներ են կատարվել (վերականգնվել ու գործում են բոլոր հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի և մարզական դպրոցները, բուժհաստատությունները, սպասարկման ոլորտի շատ կազմակերպություններ, վերականգնվել է բնակֆոնդի մի մասը), սակայն մինչև օրս վերացված չեն սարսափելի աղետի հետևանքները, դեռևս ամբողջովին լուծված չէ անօթևան բնակիչներին բնակարանով ապահովման խնդիրը, կան չլուծված սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ՝ փողոցների բարեկարգում և լուսավորություն, ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, կոյուղագծերի կառուցում և վերանորոգում: Սպիտակում խիստ կարևորվում է աշխատատեղերի ստեղծման խնդիրը:

## 2. Պատմական և մշակութային արժեքներ

Համայնքում գտնվում են 128 պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններ, ընդգրկված են ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում:

## 3. Ժողովրդագրություն և սոցիալական կազմ

Համայնքի մշտական բնակչության թվաքանակը ՀՀ Ոստիկանության ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժնի կողմից ոփալներով 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 43460 մարդ:

## 4. Տեղական ինքնակառավարման մարմինները, նրանց գործունեության ուղղությունները

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 27 անդամից, (ընտրված 2021 թվականին դեկտեմբերի 5-ին) լիազորությունների սկիզբը 2021թ. դեկտեմբերի 17-ից:
2. Համայնքի ղեկավարը (ընտրված 2021 թվականի դեկտեմբերի 5-ին), լիազորությունների սկիզբը 2021թ դեկտեմբերի 17-ից:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի

աշխատակազմի և քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքների թիվը 173 է, որից քաղաքական պաշտոն-3, հայեցողական պաշտոն զբաղեցնողներ- 3, համայնքային ծառայողներ-80' սպասարկող անձնակազմ-54,5:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 4 կառուցվածքային ստորաբաժանումներից:

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը:

*Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ Կառուցվածքային ստորաբաժանումներ*

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի առևտրի և սպասարկման բաժին

Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին

Մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժին

Քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

*Համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները և հաստիքային միավորների և աշխատակիցների թվաքանակը.*

- «Սպիտակի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ - 10,12 հաստիքային միավոր - 14 աշխատակից,
- «Սպիտակի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ - 27,72 հաստիքային միավոր - 31 աշխատակից,
- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շիրակամուտի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ 13,2 հաստիքային միավոր - 10 աշխատակից,
- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի «Հասմիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ – 9,95 հաստիքային միավոր - 14 աշխատակից,
- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» ՀՈԱԿ – 5 հաստիքային միավոր - 6 աշխատակից,
- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Մեծ Պարնու մանկապարտեզ» ՀՈԱԿ – 10 հաստիքային միավոր - 14 աշխատակից,
- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ - 5,62 հաստիքային միավոր - 7 աշխատակից,
- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» ՀՈԱԿ – 5,62 հաստիքային միավոր - 7 աշխատակից,
- «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ – 29,04 հաստիքային միավոր- 24 աշխատակից,
- «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ – 9 հաստիքային միավոր – 10 աշխատակից,
- Շիրակամուտի երաժշտական դպրոց ՀՈԱԿ – 13,2 հաստիքային միավոր - 11 աշխատակից,
- «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ – 17 հաստիքային միավոր – 19 աշխատակից,
- «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ - 14 հաստիքային միավոր – 15 աշխատակից,
- «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ – 36 հաստիքային միավոր – 36 աշխատակից

## 5.Գործող կազմակերպություններ

| հ/հ | Արտադրական ձեռնարկության անվանումը | Հասցեն | Գործունեության բնագավառը | Ձեռնարկության /կազմակերպության առկա իրավիճակը գործում է/ չի գործում |
|---|---|---|---|---|
| 1. | «Մ. Լամբարյան» ՍՊԸ | Ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 274 | քաղաքացիական շինարարություն | գործում |
| 2. | «OUS- շին» ՍՊԸ | Ք. Սպիտակ, Թորոսյան 8 | քարաքացիական շինարարութջւն | գործում է |
| 3. | «ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ | Ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 43 | քաղաքացիական շինարարություն, ճանապարհաշինություն, էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի շինարարություն | գործում է |
| 4. | «Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ | Ք. Սպիտակ, Շիրակի խճ. 144 | ընտանի թռչունների բուծում, հավի մսամթերքի արտադրություն | գործում է |
| 5. | «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ | Ք.Սպիտակ, Այգեստան 47/5 | կերերի արտադրություն | գործում է |
| 6. | «Մոնոլիտ Սպիտակ» ՍՊԸ | Ք.Սպիտակ, Գյումրիի խճ. 36 | բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների արտադրություն | գործում է |
| 7. | «Սպիտակ» նոտարական տարածք | Ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 17բ/1 | նոտարական ծառայություն | գործում է |
| 8. | Կադաստրի կոմիտե | Ք.Սպիտակ, Շահումյան փ. 7 շենք | պետական կառավարչական հիմնարկ | գործում է |
| 9 | «Պիրզաձոր» ՍՊԸ | Նոր Խաչակապ | հանքարդյունաբերական արտադրամաս | գործում է |
| 10 | <<Տարիել>> ՍՊԸ | Ք. Սպիտակ, | հյուրանոց | Գործում է |

## 6. Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է ***«Սպիտակի բժշկական կենտրոն»*** ՓԲԸ, որը համայնքի բնակչության առողջապահական սպասարկումը իրականացնում է երկու մասնաշենքերում, /հիվանդանոցային և պոլիկլինիկական/ արհեստավարժ բուժական անձնակազմի օգնությամբ: /բժիշկներ' 52 և 105 միջին բուժանձնակազմ/: Մասնաշենքերը գտնվում են լավ վիճակում /հնարավորության դեպքում կարելի է կատարել պոլիկլինիկական մասնաշենքի առաստաղի մասնակի վերանորոգում/, ջեռուցվում են: Հիվանդանոցն ունի սոմատիկ, վիրաբուժական, մանկաբարձա-գինեկոլոգիական, ինֆեկցիոն բաժանմունքներ, դիագնոստիկ ախտորոշիչ բաժին, շտապ բուժօգնության ենթակայան: 2016թ. հունիսից ԲԿ-ում գործում է նաև ժամանակակից ակնաբանական կենտրոնը:

Համայնքում գործում են 7 դեղատներ: Բժշկական ծառայություն է մատուցվում նաև **«Ռեցեպտոր»** առողջապահական կենտրոնի /2 բժիշկ, 2 բուժքույր, 1 բժշկի օգնական: **«Հույս**

**Հայաստան հիմնադրամ»-ի** բժշկական բարեգործական կենտրոնի /4 բժիշկ, 3 բուժքույր, 2 օժանդակ աշխատակից/ կողմից: Համայնքապետարանի և **«Խնամք»** ՀԿ-ի համագործակցությամբ Իտալական թաղամասում կառուցվել, գույքով համալրվել է և 2016թ ապրիլից գործում է խնամքի կենտրոնը՛ հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց համար, որտեղ աշխատում է 12 մարդ:
Համայնքում գործում են նաև առողջապահական ՊՈԱԿ-ներ՝
**«Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ**, անձնակազմը՝ 7, մատուցվող ծառայությունը՝ ամբուլատոր պոլիկլինիկական և առողջության առաջնային պահպանում:
Սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 2756 մարդ:
**«Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ**, անձնակազմը՝ 16, սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 6239 մարդ: Սպասարկում է Սարամեջի և Լեռնավանի ԲՄԿ-ները /բուժակամանկաբարձական կետեր/:

**«Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ**, անձնակազմը՝ 38, իրականացնում է ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություն:
Սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 11012 մարդ:
Սպասարկում է Ծաղկաբերի, Խնկոյանի, Լուսաղբյուրի, Գեղասարի, Սարահարթի, Շիրակամուտի, Գոգարանի, Կաթնաջուրի, Սարալանջի Հարթագյուղի ԲՄԿ-ները /բուժակամանկաբարձական կետեր/:

## 7. Աշխատանք և սոցիալական ծառայություն

Համայնքում կա 23529 աշխատունակ մարդ, որոնցից մշտական աշխատանքով զբաղված են միայն 5976-ը, 2021 անձ որպես գործազուրկ գրանցված են Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնում:

Համայնքի 5312 ընտանիքներից 2879-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառու է գնահատվել 2362 ընտանիք: Համայնքում բնակվում է 4152 հաշմանդամ, միակողմանի ծնողազուրկ՛ 104 երեխա:

Համայնքում պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացումը միտված է համայնքի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ռիսկերի աստիճանական կրճատմանը: Համայնքում սոցիալապես խոցելի ընտանքներն իրենց բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով բազմաթիվ են: Պետական պատվերի շրջանակներում համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Սպիտակի ՍԾՏԳ-ի կողմից: Կշարունակվի Սպիտակի համայնքապետարանի և սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, որոնց արդյունքում նախատեսվում է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սոցիալապես անապահով, բազմանդամ, բազմազավակ ընտանիքներին, կերակրող կորցրած, միայնակ մոր կարգավիճակ, հաշմանդամության խումբ ունեցող անձանց սննդի (1730 ընտանիք), 1550 դպրոցահասակ երեխաներին՛ հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների, 1115 միայնակ ծերերին՛ ձմեռային տաք կոշիկների, հագուստի, անկողնային պարագաների:

Շահագործված մշակութային (թանգարաններ, գրադարաններ) և մարզական նշանակություն ունեցող (մարզադպրոցներ, մարզադահլիճներ) շենքերն ու շինությունները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցություն ունեն մշակութային, մարզական-մասսայական ծրագրերին: Համայնքապետարանի կողմից յուրաքանչյուր տարի 2մլն 850 հազար դրամ է կներդրվի «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող Սպիտակ համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի (58 շահառու) առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրին (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ):

## 8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ներկայումս քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է առանց հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, համայնքը չունի նաև քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն: Վերջին 4 տարիների ընթացքում համայնքում կառուցապատողներին տրվել է 82 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ (կամ նախագծման թույլտվություններ):

Համայնքում առկա են 21 գործող և 4 փակ գերեզմանատներ: Գործող գերեզմանատների զբաղեցրած տարածքը 66,56 հա է, որը ՀՀ կառավարության որոշումներով փոխանցվել է համայնքին՝ որպես հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամաս, գործառնական դասակարգումը՝ գերեզմանոց: 0569-0012 կադաստրային ծածկագրով 0.28հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամասում գտնվող Հայրենական Մեծ պատերազմի գերմանացի ռազմագերիների, 0271-0075 կադաստրային ծածկագրով, 1.23հա մակերեսով և 0516-0001 կադաստրային ծածկագրով, 0,71հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամասերում գտնվող գերեզմանատները փակ են: Սպիտակ քաղաքի գործող գերեզմանատանը կից 0126-0001 կադաստրային ծածկագրով 2.5հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական դասակարգման հողամասում բնակչության կողմից կատարվում են հուղարկավորություններ:

## 9. Ջրամատակարարում և ջրահեռացում

Սպիտակ քաղաքի և Մեծ Պարնի, Կաթնաջուր, Ջրաշեն բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում են «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից: Անբավարար է գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի տեխնիկական վիճակը: Առկա է ինքնահոս 176,8 կմ երկարությամբ և ճնշումային 62,7 կմ երկարությամբ ջրատարեր:

Սպիտակ համայնքի ազգաբնակչությունը խմելու ջուր ստանում է ջրամատակարարման չորս համակարգով.

1. Չախկալի կապտաժներից (19 հատ) Չախկալի-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ L=66.2 կմ, տրամագիծ՝ ճ=219- 530մմ խողովակով, նյութը պողպատից է, արտադրողականությունը՝ Ը=20-50լ/վրկ,
2. Շիրակամուտի ինքնաբուխ խորքային հորերից, Շիրակամուտ-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ L=42,3 կմ, տրամագիծը՝ մ=530 մմ, նյութը պողպատից է, արտադրողականությունը՝ 0=25-35լ/վրկ,
3.Ջրաշենի խորքային հորերից, Ջրաշեն-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ L=6.5 կմ, տրամագիծը՝ ճ=319մմ խողովակով, նյութը՝ թուջ, արտադրողականությունը՝ 0=30-35 լ/վրկ,
4.Ղազանչի-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը L=5.3կմ, տրամագիծը՝ ճ=125մմ խողովակով, նյութը՝ պողպատ, արտադրողականությունը՝ 0=2-4լ/վրկ,

Համայնքի ջրամատակարարման համակարգի գործող ՕԿՋ-ն են Չախկալի-Սպիտակ ջրատարի ՕԿՋ 2ճ2000մ3 և Ջրաշեն- Սպիտակ ջրատարի ՕԿՋ 1X1 ՕՕՕմ3, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 5000մ$^3$:

Սպիտակ քաղաք և Սպիտակ համայնքի բնակավայրեր մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարվում է առանձին կառուցված քլորակայաններում: Սակայն համայնքի առանձին թաղամասերում ջրագծերի անորակության պատճառով անընդհատ վթարներ են տեղի ունենում, որի հետևանքով շատ հաճախ բնակիչներին ջուր չի մատակարարվում, կամ մատակարարված ջուրը չի համապատասխանում սանիտարական պահանջներին:

Բաժանորդների թիվը կազմում է 5 034 տնտեսություն՝ ներառյալ տնտեսվարող սուբյեկտները:

Սպիտակ քաղաքի կոյուղու ընդհանուր երկարությունը կազմում է 21կմ: իսկ Սպիտակ քաղաքի կոյուղագիծը կառուցված կոյուղու կոլեկտորների միջոցով, հեռացվում է մինչև Սայաթ-Նովա փողոցի վերջնամասը, որտեղ առանց մաքրման թափվում է «Փամբակ» գետի մեջ՝ կոյուղու մաքրման կայան չլինելու պատճառով: Գետի աղտոտվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտություն կա կառուցել կեղտաջրերի մաքրման կայան:

Սպիտակ համայնքի բնակավայրերում և Սպիտակ քաղաքի Այգեստան և Քըր-Քըրքոյան փողոցների մի հատվածում կոյուղագիծ առկա չէ:
2023 թվականին նախատեսվում է Լեռնավան, Քարաձոր, Շենավան և Ծաղկաբեր բնակավայրում խմելու ջրի ցանցի վերանորոգման, գոյություն ունեցող ջրագծի փոխարինման, ներքին ցանցի ընդլայնման, ջրիավաք ավազանի և ջրագծերի կառուցում:

## 10. Էներգամատակարարում

Սպիտակ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ. ցանցեր» ընկերության կողմից: Առկա է 116 էլենթակայան: Ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 2,25 ՄՎտ է: Բարձր լարման էլեկտրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 211 750 մ, իսկ ցածր լարմանը՝ 325 500մ: Հանրապետության էլեկտրահամակարգի հետ կապն իրականացվում է 11 Օկվ միաշղթա բարձր լարման «Արջուտ-1 և 2» «Սպիտակ-Ապարան» բարձրավոլտ գծերով, որոնք անցնում են քաղաքի հեռանկարային սահմանով. Սպիտակ 110/35/10 կվ ենթակայանը սնող 11 Օկվ բարձրավոլտ գծերի համար նախատեսվում է պաշտպանիչ գոտի՝ նորմատիվային պահանջներին համապատասխան: Սպիտակ համայնքի բնակելի տների, արտադրական ձեռնարկությունների արտաքին լուսավորության պահանջները բավարարվում են վերը նշված գլխավոր իջեցնող ենթակայաններից: Գործող 6-10 կվ լարման 1 հատ բախշիչ կայանի և 6-10/0.4 կվ լարման 98 հատ իջեցնող ցանցային միատրանսֆորմատորային ենթակայանները /կ.տ.ե/ համայնքի բնակչության, հասարակական և կենսապահովման օբյեկտների էլեկտրամատակարարումը վերականգնելու համար տեղադրվել են երկրաշարժից հետո ավերված ենթակայանների փոխարեն: Համայնքի 6-10 կվ լարման մալուխային գծերի երկարությունը 54 կմ է, օդայինը՝ 105 կմ: Էլեկտրամատակարարման բնակիչ-բաժանորդների թիվը 12 293 է, փաստացի մատակարարվում է 10 893 բաժանորդի: Հանրային հատվածում կա 382 բաժանորդ:

Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում, հիմնանորոգում և արդիականացում:

Արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, էներգախնայողական լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում:

Էներգատար տեխնոլոգիաների կրճատում:

## 11. Գազամատակարարում

Սպիտակ համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից «Սպիտակ» և «ԳԲԿ» ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը 7600 ն.մ ժամ է. սնումն իրականացվում է Կրասնի մոստ-Վանաձոր-Գյումրի-Արմավիր 325մմ տրամագծով բարձր ճնշման գազատարից: Գոյություն ունի 3 միջին ճնշման 93 678 մ երկարությամբ և 1 ցածր ճնշման 256 249 մ երկարությամբ գազատարեր:
2022թ. հունվարի 1-ի դրությամբ Սպիտակ համայնքում գազաֆիկացված են 8064 բնակարաններ և առանձնատներ:

## 12.Աղբահանություն, սանիտարական մաքրում

Սպիտակ համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 4657,91 հազ. քմ: Համայնքում աղբահանության, սանիտարական և ձմեռային մաքրման աշխատանքներն իրականացվում է մրցույթով ընտրված կազմակերպությունների կողմից: Աղբահանությունը կատարվում է շուրջ 166 բազմաբնակարան շենքերից և շուրջ 8118 մասնավոր տնտեսություններից: Աղբահանությունը իրականացվում է ամենօրյա և շաբաթական ռեժիմներով:
Ձյան մաքրման աշխատանքներում ներգրավվում է տարբեր տիպի տեխնիկա: Սպիտակ համայնքի վարչական տարածքում տեղադրված է թվով 950 աղբաման:

Սպիտակ համայնքում նախատեսվում է ձեռք բերել պլաստիկե աղբամաններ և իրականացնել աղբամանների ցանկապատում՝ շրջակա միջավայրի աղտոտումից խուսափելու նպատակով:

## 13.Համայնքի հողային ֆոնդ

Սպիտակ համայնքի տարածքը 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ 61531,36 հեկտար է. այդ թվում՝ համայնքային սեփականության հողերը կազմում են 33480,81հա, պետական սեփականության հողերը՝ 13633,39 հա, քաղաքացիներին՝ 12214,40հա և իրավաբանական անձանց սեփականությանը՝ 2199,38հա:

280.78 հեկտարից ավել հողեր տարբեր ժամանակներում հատկացվել են համայնքի բնակիչներին, սակայն փաստաթղթեր չեն պահպանվել և ներկայումս առանց իրավաբանական ձևակերպման օգտագործվում են նրանց կողմից:

- ՀՀ կառավարության 10.05.2012թ. թիվ 595 որոշմամբ «Վարպետաց» թաղամասի տարածքը առանձնացվել է որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ: Թաղամասում կառուցվել են միայն բնակելի տներ և մնացած մասով ծրագիրը չի իրականացել: «Վարպետաց» թաղամասի բնակելի տները միայն զբաղեցրած հողամասերով են ստացել իրավունքի պետական գրանցում և փոխանցվել կամ փոխանցվում է (գործընթացը շարունակվում է) բնակիչներին, իսկ տնամերձ հողամասերը մնացել են պետական սեփականություն, սակայն օգտագործվում են բնակիչների կողմից առանց իրավական ձևակերպման:

## 14.Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Համայնքի կոյուղին առանց մաքրման թափվում է Փամբակ գետի մեջ և աղտոտում այն, ուստի անհրաժեշտություն կա կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման: Սպիտակ քաղաքի ջրահեռացման համակարգերը քայքայվել են և ի հայտ են եկել բնականոն հոսքերի խափանման երևույթներ:

Համայնքի բոլոր կանաչ զանգվածների և ծառատնկված վայրերի ընդհանուր մակերեսը կազմում 5037"9 հա: Յուրաքանչյուր տարի ստեղծվում են ծաղկանոցներ, էտվում և ձևավորվում են 520 ծառեր, կազմակերպվում է ծառատունկ, իրականացվում է կանաչապատ տարածքների սպասարկման այլ աշխատանքներ:

Սպիտակ համայնքը 2014 թվականի մայիսին միացել է Եվրամիության Քաղաքապետերի դաշնագրին՝ պաշտոնապես հանձն առնելով քաղաքում բարձրացնել էներգիայի արդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը: Դաշնագրին միանալուց հետո կազմվել և համայնքի ավագանու կողմից հաստատվել է Սպիտակ համայնքի կայուն էներգիայի զարգացման գործողության ծրագիրը, որը 2015 թվականի ապրիլի 10-ին ընդունվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից: Դաշնագրին միանալուց հետո կարճ ժամանակահատվածում մշակվել և առ այսօր համայնքում իրականացվում են մի շարք ծրագրեր:

Այդ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է փոխարինել համայնքում տեղադրված փողոցային լուսավորության մոտ 200 կոմպակտ ֆլուրիսցենտ էլեկտրական 80վտ հզորությամբ լամպերը 60վտ հզորությամբ լուսադիոդային լամպերով: Բացի էներգասպառման նվազումից միջոցառումը պետք է նպաստի փողոցային լուսավորության որակի բարելավմանը՝ նոր լամպերի լուսային անդրադարձի արդյունավետության հաշվին: Տարեկան ակնկալվում է ստանալ մոտ 7.48 մվտժ էներգասպառման կրճատում:

Նախատեսվում է նաև փոխարինել համայնքում տեղադրված փողոցային լուսավորության բոլոր 263 բարձր ճնշման նատրիումային 250վտ լամպերը 80վտ հզորությամբ լուսադիոդային լամպերով: Բացի էներգասպառման նվազումից միջոցառումը պետք է նպաստի փողոցային լուսավորության որակի բարելավմանը՝ նոր լամպերի լուսային անդրադարձի արդյունավետության հաշվին: Տարեկան ակնկալվում է ստանալ մոտ 51.62 մվտժ էներգասպառման կրճատում:

2022 թվականին փոխարինվել և տեղադրվել են Սպիտակ, Լեռնանցք, Ջրաշեն, Արևաշող, Արջհովիտ, Շենավան, Գեղասար և Խնկոյան բնակավայրերի փողոցային լուսավորության 285 հատ լեդ լամպեր:

2023 թվականի ընթացքում նախատեսվում է փոխարինել կամ տեղադրել Սպիտակ, Լեռնանցք, Ջրաշեն, Արևաշող և Շիրակամուտ բնակավայրերի փողոցների լուսավուրության ֆլուրիսցենտ էլեկտրական լամպերը 390 հատ լեդ լամպերով:

15.Բնակտնտեսություն

Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը' 108/994,
Համայնքի սեփականություն համարվող բազմաբնակարան շենքերի թիվը' 25, բնակարանների թիվը' 71,
Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը' 166851.03, այդ թվում' համայնքային սեփականություն (17804.87քմ), ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն (90953.11 քմ), պետական սեփականություն (58093.05):
Կիսակառույց բազմաբնակարան շենքերի թիվը' 2:
Համայնքում առկա են 5485 առանձնատներ: Բնակարանով կարիքավոր ընտանիքների թիվը՝ 1574 է:

## 16.Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Սպիտակ համայնքը գտնվում է տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Սպիտակ համայնքի վարչական տարածքով են անցնում Վրաստանի, Ռուսաստանի /Երևան- Գյումրի-Սպիտակ-Վանաձոր-Մ՛ոսկվա/ և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները, Մ-3 «Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման» և Մ-7 «Մ-3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհները: Սպիտակ քաղաքը բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:
Համայնքում գոյություն ունի 31 ավտոմոբիլային միաթռիչք և 3 երկաթուղային միաթռիչք բավարար տեխնիկական վիճակի կամուրջներ:
Համայնքում 2022թ.հունվարի 1-ի դրությամբ գրանցված է 6751 անձնական և 1796 արտադրական ձեռնարկությունների ավտոմոբիլ: Սպիտակ համայնքում գործում են թվով 5 միկրոավտոբուսային երթուղիներ և հասարակական տրանսպորտի սպասարկման 27 կանգառներ:
Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 2 մասնավոր կազմակերպություններ:
Ներհամայնքային գրունտային փողոցներում պարբերաբար իրականացվում են նորոգման աշխատանքներ:
2022 թվականի ընթացքում համայնքում իրականացվում են փողոցների ասֆալտ/բետոնե ծածկույթի վերականգնման աշխատանքներ:
2022 թվականի ընթացքում Սպիտակ համայնքի մի շարք բնակավայրերում նախատեսվում է ներբնակավայրային ճանապարհների տուֆով սալարկման աշխատանքներ: Բացի այդ կատարվել են որոշ ներբնակավայրային ճանապարհների հիմնանորոգում:
Սպիտակ քաղաքում իրականացվել է ասֆալտապատ փողոցների գծանշման աշխատանքներ: Գծանշման աշխատանքներ պետք է իրականացվեն նաև Սպիտակ համայնքի բնակավայրերի ասֆալտապատ փողոցներում: Տեղադրվել են նոր ճանապարհային նշաններ և վերանորոգվել են հները:

## 17.Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ

Սպիտակ համայնքն ունի 1 զբոսայգի, 30 խաղահրապարակ, 11 հանգստի գոտի, 23 մերձակա անտառային գոտի, բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ:
Մերձակա անտառային գոտիները գտնվում է լավ վիճակում:
Զբոսայգում վերանորոգման աշխատանքներ իրականացվել են 1990-ական թվականներին: Կարուսելները և նստարանները խորհրդային ժամանկաշրջանից են, ներկայումս դրանք շահագործման համար պիտանի չեն:
Որոշ բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ գտնվում են անբարեկարգ վիճակում:

## 18.Աղետների ռիսկի կառավարում

Վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն ավելացել է բնական աղետների հաճախականությունը և դրանց ուղեկցող մարդկային և նյութական կորուստների չափը:

Համայնքի կայուն զարգացման համար աղետների ռիսկերի գնահատումը և արդյունավետ կառավարումը կարևորագույն նախապայման է:

Սպիտակ համայնքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում, ուստի երկրաշարժերը մեծ վտանգ են ներկայացնում համայնքին: Կլիմայի հետ կապված աղետները՝ երաշտները և հեղեղումները, նույնպես զգալի վնաս են հասցնում համայնքի տնտեսությանը: Համայնքը կարիք ունի ռիսկի կառավարման տեղեկատվության հավաքագրման և օգտագործման համակարգի, աղետների ռիսկի կենտրոնացված տվյալների բազայի և ռիսկի քարտեզավորման համակարգերի: Անհրաժեշտություն կա տեղական մակարդակով սկսել աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) շրջանակներում խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ), ինչպես նաև դրա իրականացման գործընթաց: Անհրաժեշտություն կա ձեռք բերելու ազդարարման համակարգեր և հակակարկտային կայաններ:

## 19.Գյուղատնտեսություն

Համայնքում զարգացած է գյուղատնտեսության հետևյալ ճյուղերը՝ դաշտավարություն, անասնապահություն, այգեգործություն և այլն:

Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 2858,5 հա, առկա է մոտավորապես 280 գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ: Համայնքում խոշոր և մանր եղջերավոր անասունների թիվը 2022թ.հունվարի 1-ի դրությամբ կազմում է 10 686 խոշոր և 4 138 մանր, խոզեր 844, թռչուններ 245 621 թև, որից 220 000-ը՝ Սպիտակի թռչնաֆաբրիկայում, մեղվաընտանիքներ 1 300 հատ: Գյուղատնտեսական մթերքներից համայնքում արտադրվում է կաթ, պանիր, միս, թռչնի միս, ձու, մեղր:

Ամեն տարի սահմանված կարգով ու ժամկետներում կազմակերպվում է անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներ, ժամանակին ու պատշաճ կատարվել է կենդանիների հիվանդությունների կանխման հակահամաճարակային միջոցառումներ: Պետական աջակցությամբ հողօգտագործողներին տրամադրվում է կարտոֆիլ, գարու, ցորենի բարձրակարգ սերմացուներ և պարարտանյութեր: Կենդանիների հաշվառման և համարակալման համակարգի ներդրման գործընթացը նախատեսվում է 2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

2023 թվականին Սպիտակ համայնքի բնակավայրերում նախատեսվում է կառուցել՝ Արջիովիտ 2,5-3 կմ, Գեղասար 2 կմ, Սարահարթ 2,29 կմ, Գոգարան 3 կմ և Լեռնավան 1,2 կմ երկարությամբ ոռոգման ցանց: Սարամեջում նախատեսվում է վերանորոգել գոյություն ունեցող 3 ջրամբարներ՝ գեոմեմբրանով: Կաթնաջուրում կառուցվելու է 30-40 լ/վրկ հզորությամբ ոռոգման ջրի պոմպակայան: Շենավան բնակավայրում նախատեսվում է վթարված բետոնե կիսախողովակների փոխարինում նորերով:

## 20.Գովազդ, առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների ընդհանուր թիվը կազմում է 224, այդ թվում՝
առևտրի օբյեկտներ-195,
հանրային սննդի օբյեկտներ -9,
սուպերմարկետ-1,
խաղատներ, զվարճանքի, շահումով խաղերի օբյեկտներ-
0, բենզինի լցակայաններ - 7, գազի լիցքավորման կետեր
- 12, գյուղատնտեսական արտադրանքի շուկա - 0:

Սպիտակ համայնքում անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտները, իսկ կենտրոնական փողոցներին հարող տարածքները և մայթերը գերհագեցած են կրպակներով ու տաղավարներով, որոնցից շատերն արդեն իսկ ծառայում են փողոցային առևտուր իրականացնողների համար որպես պահեստներ: Ինչպես այդ, այնպես էլ պարենային, ոչ պարենային ապրանքների և գյուղմթերքների բացօթյա առևտուրը ենթակա է կանոնակարգման:

Գովազդը համարվում է ճարտարապետական միջավայրի ձևավորման հիմնական տարրերից մեկը: Համայնքում զբոսաշրջության զարգացման և հյուրերին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրման համար անհրաժեշտ է հյուրանոցի, համայնքի հիմնական մշակութային օջախների, հասարակական սննդի կետերի գտնվելու վայրերի վերաբերյալ խորհրդանշող վահանակներ: Սպիտակ համայնքի տարածքում 2022թ. հունվարի 1-ի դրությամբ տեղադրված են 14 արտաքին գովազդային նյութեր՝ 27 գովազդային վահանակների և 13 հենասյուների վրա:

Գովազդի ոլորտը համայնքում կարգավորվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ ավագանին սահմանել է մեկ քմ-ի համար հետևյալ գովազդային սակագները՝

ա) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդի համար՝ 2000 (երկու հազար) դրամ,

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ, գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ,

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար սահմանված տուրքի 375 (երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ,

ե) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 150 (հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

## 21. Կրթություն

Համայնքում գործում են 28 դպրոցներ՝ 17 միջնակարգ, 10 հիմնական, 1 ավագ, որոնք տեղավորված են հարմարավետ և լուսավոր շենքերում: Աշակերտների թիվը՝ 3842, աշխատողների թիվը՝ 896, շենքերի վիճակը՝ լավ: Թիվ 8 միջնակարգ դպրոցը գազաֆիկացված չէ, ջեռուցվում է էլեկտրաէներգիայով:

## 22. Մշակույթ, ֆիզկուլտուրա և սպորտ

Սպիտակի համայնքապետարանի ենթակայությամբ գործում են «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն», «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» և Շիրակամուտի երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ները, որտեղ հաճախում են համապատասխանաբար երաժշտական կրթություն ստացող 216 և գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն ստացող 97 երեխաներ, որտեղ ներգրավված են շուրջ 45 աշխատողներ:

Դպրոցները տեղավորված են լուսավոր և հարմարավետ շենքերում, ուսուցիչները ունեն համապատասխան մասնագիտական կրթություն:

**«Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն»** ՀՈԱԿ՝ խմբերի թիվը 10՝ կերպարվեստի հիմունքներ և նկարչություն, կիրառական արվեստ, ծեփագործություն, գծանկար, գեղանկար, ստեղծագործություն, դեկորատիվ-կիրառական բաժին, արվեստի պատմություն, քանդակագործություն, գորգագործություն և կար, գոբելեն: Աշակերտների թիվը՝ 97, աշխատակիցների թիվը՝ 10: Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, ակնհայտ բարձրացել է ուսման որակը, որը պայմանավորված է նաև աշխատողների ջանասիրությամբ, մասնագիտական հմտությամբ ու փորձի, պատասխանատվությամբ: Գեղարվեստի դպրոցի սաները մշտապես մասնակցում են մարզային, հանրապետական ու միջազգային մրցույթ-փառատոնների՝ զբաղեցնելով պատվավոր հորիզոնականներ և արժանանալով պատվոգրերի, շնորհակալագրերի, հավաստագրերի, մեդալների ու մրցանակների:

Գեղարվեստի դպրոցի շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:

Խմբային սենյակների ավելացում:

Գեղարվեստի դպրոցի նոր խմբերի ստեղծում:

Մասնագետների վերապատրաստում, նոր մասնագետների ներգրավում:

Գույքի համալրում:

**«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ՝** խմբերի թիվը 12՝ երգչախումբ, ջութակի համույթ, քանոնի համույթ, դհոլահարների համույթ և նվագախումբ, բաժինները՝ դաշնամուրային, լարային, ազգային և վոկալ, աշակերտների թիվը՝ 216, աշխատակիցների թիվը՝ 35: Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, նկատելիորեն բարձրացել է ուսման որակը, աշխատողների պատասխանատվությունը: Զգալի հաջողությունների են հասել երաժշտական դպրոցի սաները՝ մասնակցելով մի շարք մրցույթ-փառատոների:

Երաժշտական դպրոցի շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:

Մասնագետների վերապատրաստում, նոր մասնագետների ներգրավում:

Գույքի և երաժշտական գործիքների համալրում:

**Շիրակամուտի երաժշտական դպրոց ՀՈԱԿ՝** խմբերի թիվը 5՝ երգչախումբ, դաշնամուր, քանոնի համույթ, սոլֆեջո և երաժշտական գրականություն, աշակերտների թիվը՝ 38, աշխատակիցների թիվը՝ 11: Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, նկատելիորեն բարձրացել է ուսման որակը, աշխատողների պատասխանատվությունը: Զգալի հաջողությունների են հասել երաժշտական դպրոցի սաները՝ մասնակցելով մի շարք մրցույթ- փառատոների:

Մասնագետների վերապատրաստում, նոր մասնագետների ներգրավում:

Գույքի և երաժշտական գործիքների համալրում:

*Մշակույթի տուն*

Մշակույթի տանը գործում են պարի, երգի և թատերական մեկական խմբեր, որոնցում ընդգրկված են շուրջ 32 սաներ: Մշակույթի տան գործունեությունը նպատակաուղղված է շնորհալի երեխաների հայտնաբերմանը և նրանց տաղանդի բացահայտմանը:
Մշակույթի տան պարային խմբերը, երգի և տիկնիկային ստուդիայի սաները մշտապես մասնակցում են մարզային և հանրապետական մրցույթների, փառատոների և հիմնականում վերադառնում մրցանակներով, դիպլոմներով, շնորհակալագրերով ու հավաստագրերով:

Համայնքում կազմակերպվում են միջոցառումներ նվիրված ՀՀ տոների և հիշատակի օրերին, հոբելյանական և հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ:

Մշակույթի տան շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:

Կապիտալ վերանորոգում:

Խմբային սենյակների ավելացում:

Ձայնային և լուսային համակարգի, անհրաժեշտ տեխնիկայի համալրում:

Մշակույթի տան թատերական խմբի և նոր համույթների ստեղծում:

Մասնագետների վերապատրաստում, նոր մասնագետների ներգրավում:

*Գրադարան*

Համայնքում գործում է *մեկ քաղաքային գրադարան,* որի գրքային ֆոնդը կազմում է 31 476 օրինակ գիրք ու բրոշյուր և 1069 օրինակ ամսագրեր ու լրագրեր: Գրադարանի թանգարանային բաժնի հիմնական ցուցանմուշների թիվը կազմում է 253 և գիտաօժանդակ նյութեր՝ 1456: Ընթերցողների թիվը՝ 2758 մարդ: Թանգարանի այցելուների թիվը՝ 4270 մարդ: Գրադարանում իրականացվում են «Գրադարանային շաբաթ», «Գիշերային գրադարան», «Թանգարանային գիշեր» ծրագրերը և բազմաբնույթ այլ միջոցառումներ, որոնցում մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ օգտագործելով նրանց ներուժը տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար: Գրադարանն ունի գույքի համալրման կարիք:

# 23.Համայնքի ռազմավարությունը, նպատակները

Սպիտակ համայնքի տեսլականը (հեռահար նպատակը) համայնքի կայուն զարգացումն է, որին համայնքը ձգտում է հասնել 5 տարի հետո:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականը հետևյալն է'

Համայնքում կրթական, մշակութային և մարզական հաստատությունները շահառու խավերի համար դարձել են առավել մատչելի և որակյալ, երիտասարդության ժամանցի կազմակերպման համար ստեղծվել են հարմար պայմաններ:

Համայնքի բնակիչներն ունեն բարելավված կենցաղային և բնակարանային պայմաններ:

Համայնքում Տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը բաց է ու թափանցիկ, բնակիչները մասնակից են ՏԻՄ բոլոր օղակների որոշումների կայացմանը:

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ:

*Համայնքի իրավիճակի վերլուծության համար օգտագործվել է SWOT (ՈՒ-ԹՀՍ) վերլուծությունը, որի արդյունքում ընտրվել է համայնքի հնգամյա զարգացման հետևյալ ռազմավարությունը' բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զբոսաշրջության զարգացման կենտրոն' մաքուր, բարեկարգ և գրավիչ:*

*Համայնքի ռազմավարական նպատակներն են'*

- *զարգացնել տեղական ինքնակառավարումը,*
- *զարգացնել մարդկային կապիտալը,*
- *ստեղծել նոր որակի համայնքային միջավայր,*
- զարգացնել փոքր ու միջին ձեռնարկությունները:

# 24.Համայնքում իրականացվող ծրագրեր

**Ծրագրեր, ներդրումային ֆինանսական միջոցներով**

| Հ/հ | Ծրագրի անվանումը |
|---|---|
| | |
| 1. | Սպիտակի մշակույթի տան հին երաժշտական տեխնիկայի ամբողջական փոխարինում և համայնքապետարանի նիստերի դահլիճի նոր սարքավորումների ձեռքբերում. |
| 2. | Մանկական բաժանմունքների կահույքի և տեխնիկայի ձեռքբերում «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի (ք.Սպիտակ, Շահումյան 105) և «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի (ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 1) համար |
| 3. | Սպիտակ համայնքի կարիքների համար՝ ավտոաշտարակ և բենզինային գեներատորի ձեռքբերում |
| 4. | Սպիտակ համայնքի կարիքների համար՝ Աղբատար մեքենա MA3 4907CO-030, Աղբատար մեքենա MA3 4901CO-030 (4x2), Աղբատար մեքենա MA3 KO-449-17, Բազմաֆունկցիոնալ ճանապարհային մեքենա MA3-6912C3-310, Ինքնաթափ մեքենա MA3 457121-537-000 և Աղբարկղների՝ 240լ – 50 հատ, 660լ – 150 հատ, 1100լ – 300 հատ, ձեռքբերում |
| 5. | Մանկապարտեզ «Տաշիր» |
| 6. | Մանկապարտեզ մոդուլային |
| 7. | Թափառող կենդանիների վնասազերծում |
| 8. | Սպիտակ բնակավայրի կարիքների համար էներգախնայող led լուսատուների ձեռք բերում |

Սուբվենցիոն ծրագրեր 2022թ

**Ծրագիր 1**. Սպիտակ բնակավայրի Էստոնական և Տաշիր թաղամասերի գլխավոր ճանապարհների, Ծաղկաբեր համայնքի 3-րդ փողոցի և Լեռնանցք բնակավայրի «Նոր գյուղ» -ի կենտրոնական ճանապարհի սալարկում տուֆով և ջրահեռացման համակարգի կառուցում (2022թ. մայիս-նոյմբեր)

**Ծրագիր 2**. Սպիտակ բնակավայրի Այգեստան թաղամասի փողոցի հիմնանորոգում ասֆալտապատումով և ջրահեռացման համակարգով, Շենավան բնակավայրի փողոցների մասնակի ասֆալտապատում, Արևաշողի բնակավայրի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգում ասֆալտապատումով, Ծաղկաբեր բնակավայրի 1-ին փողոցի հենապատի կառուցում, Լուսաղբյուր բնակավայրի ճանապարհների ասֆալտապատում (2022թ. մայիս- նոյմբեր)

**Ծրագիր 3**. Սարահարթ բնակավայրի 4-րդ փողոցի, Լուսաղբյուր բնակավայրի գերեզմանատուն տանող, Լեռնավան բնակավայրի 2-րդ փողոցի , Ջրաշեն բնակավայրի 7-րդ փողոցի, 1-ին փողոցի, Խնկոյան բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի սալարկում տուֆով և ջրահեռացման համակարգի կառուցում (2022թ. մայիս- նոյմբեր)

**Ծրագիր 4**.Կաթնաջուր բնակավայր - «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի արցախյան գոյամարտերում անմահացած զավակների հիշատակի հուշահամալիրի կառուցում», Մեծ Պարնի բնակավայր - ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի նոր բնակատեղիի համայնքային այգու կառուցում: (2022թ. մայիս- նոյմբեր)

**Ծրագիր 5** . Սպիտակ, Լեռնանցք, Արջահովիտ, Ջրաշեն, Արևաշող, Շենավան, Գեղասար և Խնկոյան բնակավայրերի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնում (2022թ. մայիս- նոյմբեր)

**Ծրագիր 6**. Լեռնավան բնակավայրում խմելու ջրի նոր ջրագծի կառուցում, ներքին ցանցավորում, Քարաձոր բնակավայրի խմելու ջրի ցանցի մասնակի խողովակաշարի վերանորոգում, Գոգարան բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում, Շիրակամուտի թիվ 14, 16 փողոցների, Կրասնոդարի փողոցի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում, Հարթագյուղ բնակավայրի խմելու ջրի ջրագծերի փոփոխում և ակունքների վերանորոգում» ծրագրի (2022թ. մայիս- դեկտեմբեր)

**Ծրագիր 7**. Սարամեջ բնակավայրի ոռոգման ցանցի վերակառուցում, Արջահովիտ բնակավայրի ոռոգման ներքին ջրատարի կառուցում, Շենավան բնակավայրի ոռոգման համակարգի վերանորոգում և ջրամբարի հիմնանորոգում, Գեղասար՝ ոռոգման համակարգի կառուցում, Սարահարթ՝ բնակավայրի 10-րդ, 15-րդ և 16-րդ փողոցների ոռոգման համակարգի կառուցում, Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Ծաղկաբեր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Լեռնավան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում (2022թ. մայիս-դեկտեմբեր)

**Սուբվենցիոն ծրագրերի 2023-2027թ**

**Ծրագիր 1.** Քարաձոր բնակավայր

1 Խմելու ջրի ցանցի մասնակի (2500մ) խողովակաշարի վերանորոգում,
2 2000մ երկարությամբ 1-ին և 3- րդ փողոցների միակողմանի ոռոգման ջրատար առուների կառուցում,
3 3- րդ փողոցի (1000մ երկարությամբ) սալարկում:

**Ծրագիր 2.** Ծաղկաբեր բնակավայր

1 Կարկտակայանների տեղադրում.
2 Ջրահավաք ավազանի և 3-րդ փողոցի խմելու ջրագծի կառուցում.
3 Ճանապարհների տուփապատում.
4 Ճանապարհների ասֆալտապատում՝ ջրահեռացումով.
5 Զույգ աղբյուրի խմելու ջրագծի վերակառուցում:

**Ծրագիր 3.** Արջիովիտ բնակավայր

1 Ոռոգման ներքին ջրագծի կառուցում՝ 3կմ.
2 Փողոցային լուսավորություն՝ 4100մ.
3 Կոյուղու կառուցում՝ 1կմ.
4 Ներհամայնքային փողոցների ասֆալտապատում՝ 3կմ:

**Ծրագիր 4.** Շենավան բնակավայր

1 Ճանապարհների ասֆալտապատում.
1 Ոռոգման համակարգի կառուցում և վերանորոգում.
2 Հանդիսությունների սրահի հիմնանորոգում.
3 Գիշերային լուսավորության ընդլայնում.
4 Խմելու ջրագծի փոխարինում՝ 6կմ:

**Ծրագիր 5.** Լուսաղբյուր բնակավայր

1 Համայնքային կենտրոնի շենքի կառուցում.
2 Սպորտդահլիճի կառուցում.
3 Հանդիսությունների սրահի կառուցում.
4 17-րդ, 18-րդ և 2-րդ փողոցների ասֆալտապատում.
5 Բնակավայրի տարածքով անցնող սելավատարների գաբիոնով պատում.
6 Ֆուտբոլի դաշտի վերակառուցում.
7 3-րդ և 12-րդ փողոցների տուփապատում:

**Ծրագիր 6** . Խնկոյան բնակավայր

1 Խնկոյան-Լուսաղբյուր 2կմ ճանապարհի ասֆալտապատում.
2 գերեզմաններ տանող 100մ ճանապարհի քարե սալապատում:

**Ծրագիր 7**. Կաթնաջուր բնակավայր

1 330-40լ/վրկ հզորությամբ ոռոգման ջրի պոմպակայանի տեղադրում.
2 Մանկապարտեզի շենքի վերանորոգում.
3 Հրապարակի սելավատարի կառուցում և հարակից տարածքների բարեկարգում.
4 Ավտոբուսային կանգառների կառուցում:
5 Մարզադահլիճի կառուցում:

**Ծրագիր 8** . Մեծ Պարնի բնակավայր

1 Մշակույթի տան ներքին և արտաքին հարդարման աշխատանքների և գույքի ձեռքբերում.
2 Մ-2 փողոցի և գերերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկում.
3 Արտաքին լուսավորությունն՝ 1,5 կմ.
4 Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում.
5 Մինի ֆուտբոլի դաշտի կառուցում:

**Ծրագիր 9** . Լեռնավան բնակավայր

1 Գերերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկում՝ 250մ.
2 «Բեբոյի խամ գերերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկում՝ 350մ.
3 15-րդ փողոցի սալարկում տուֆ քարով, ջրահեռացման համակարգով՝ 350մ.
4 1-ին փողոցի ասֆալտապատում ջրահեռացման համակարգով՝ 410մ.
5 9-րդ փողոցի սալարկում տուֆ քարով՝ ջրահեռացման համակարգով՝ 370մ.
6 14-րդ փողոցի դեպի դպրոց գնացող ճանապարհի սալարկում տուֆ քարով՝ ջրահեռացման համակարգով՝ 220մ.
7 Վարչական շենքի կառուցում:

**Ծրագիր 10** . Լեռնանցք բնակավայր

1. Գազաֆիկացում.
2. Լուսավորության համակարգի ընդլայնում.
3. Ֆուտբոլի դաշտի վերանորոգում.
4. Ասֆալտապատման և տուֆապատման աշխատանքներ.
5. Ջրամբարի կառուցում.
6. Մշակույթի տան կառուցում:

**Ծրագիր 11**. Արևաշող բնակավայր

1 1-ին փողոցի 14-րդ նրբանցքի տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 209մ.
2 13-րդ փողոցի տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 430մ,
3 13-րդ փողոցի 1-ին փակուղու տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 150մ.
4 1-ին փողոցի 10-րդ նրբանցքի տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 294մ.
5 1-ին փողոցի 10-րդ նրբանցքի 10-րդ փակուղու տուֆ քարով սալապատում՝ 139մ.
6 1-ին փողոցի 11-րդ նրբանցքի մի մասի տուֆ քարով սալապատում՝ 280մ,
7 3-րդ փողոցի չկառուցված մասի տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 505մ.
8 7-րդ փողոցի տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 639մ.
9 11–րդ փողոցի մի մասի տուֆ քարով սալապատում և լուսավորում՝ 185մ:

**Ծրագիր 12**. Հարթագյուղ բնակավայր

1 Համայնքում կա բնական գազ, սակայն հասանելի չէ բոլորին, անհրաժեշտ է կատարել թաղամասերի գազամատակարարում.
2 Ֆոտովոլտային կայանի տեղադրում.
3 Ոռոգման համակարգի կառուցում:

**Ծրագիր 13**. Սարամեջ բնակավայր

1 3 ջրամբարների մեմբրանացում, որը կծառայի բնակչությանը որպես ոռոգման.
2 հանդիսությունների սրահի կառուցում.
3 մանկապարտեզի կառուցում.
4 երկրորդական փողոցների ճանապարհներիի վերանորոգում.
5 գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկում.
6 գիշերային լուսավորում:

**Ծրագիր 14**. Գոգարան բնակավայր

1 ոռոգման համակարգի կառուցում.
2 խմելու ջրի ներքին ցանցի մասնակի փոխարինում.
3 հանդամիջյան ճանապարհների հարթեցում (կառուցում).
4 բնակավայրի փողոցների ասֆալտապատում (տուֆապատում):

**Ծրագիր 15**. Սարալանջ բնակավայր

1 հանդիսությունների սրահի վերանորոգում,
2 գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկում կամ ասֆալտապատում՝ 300մ:

**Ծրագիր 16**. Շիրակամուտ բնակավայր

1. Հայկական փողոցի՝ մինչև «Չիչխանավանք» եկեղեցի տանող ճանապարհի ասֆալտապատում՝ 2կմ.
2. 11-րդ փողոցի լուսավորության ցանցի կառուցում՝ 350մ.
3. 18- րդ փողոցի գազաֆիկացում՝ 700մ.
4. մանկապարտեզի շենքի վերանորոգում և կահավորում:

**Ծրագիր 17**. Ջրաշեն բնակավայր

1 8-րդ փողոցի 13-րդ և 14-րդ նրբանցքների՝ 900մ, 4-րդ փողոցի՝ 300մ և 3-րդ փողոցի՝ 500մ հատվածների գազաֆիկացում.

2 10-րդ փողոցի 1-ին նրբանցքի՝ 400մ, 9-րդ փողոցի՝ 400մ, 8-րդ փողոցի 8-րդ նրբանցքի՝ 250մ, 8-րդ փողոցի 9-րդ նրբանցքի՝ 200մ, 8-րդ փողոցի 10-րդ նրբանցքի՝ 150մ, 8-րդ նրբանցքի 200մ, 1-ին փողոցի 5-րդ նրբանցքի՝ 250մ, 1-ին փողոցի 4–րդ նրբանցքի 1-ին փակուղի՝ 200մ և 1-ին փողոցի 2–րդ նրբանցքի՝ 500մ ճանապարհների սալապատում, ջրատարներով.

3 1-ին փողոցի և 1-ին փողոցի 8-րդ նրբանցքի լուսավորում.

4 փողոցների ջրատարների կառուցում.

5 ջրամբարի կառուցում.

6 մշակույթի կենտրոնի կառուցում.

7 հուշահամալիրի տարածքի բարեկարգում.

8 համայնքային ջրուսյգու կառուցում:

**Ծրագիր 18**. Սարահարթ բնակավայր

1. պոմպակայանի վերակառուցում.
2. խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և ջրամբարի վերանորոգում.
3. միջբնակավայրային փողոցների ասֆալտապատում և սալարկում տուֆ քարով.
4. փողոցային լուսավորության գոյություն ունեցող լուսատուների փոխարինում նոր ԼԵԴ լուսատուներով, ինչպես նաև մարզադաշտի և խաղահրապարակի լուսավորության ապահովում.
5. մարզադաշտի նստատեղերի կառուցում, վազքուղու բետոնացում և ռետինե շերտի իրականացում.
6. վարչական շենքի տարածքի ցանկապատում:

**Ծրագիր 19**. Նոր Խաչակապ բնակավայր

1 հանդիսությունների սրահի վերանորոգում.

2 դպրոցի կիսակառույց սպորտդահլիճի վերանորոգում.

3 գերեզմանատան ճանապարհի տուֆապատում.

4 միջհամայնքային ճանապարհների վերանորգում.

5 հանդամիջյան ճանապարհների վերանորոգում:

**Ծրագիր 20.** Գեղասար բնակավայր

1 հանդիսությունների սրահի վերանորոգում.
2 դպրոցի կիսակառույց սպորտդահլիճի վերանորոգում.
3 գերեզմանատան ճանապարհի տուֆապատում.
4 միջհամայնքային ճանապարհների վերանորգում.
5 հանդամիջյան ճանապարհների վերանորոգում:

**Ծրագիր 21** . Սպիտակ բնակավայր

1 ճանապարհների տուֆ քարով սալարկում.
2 ավտոպարկի կառուցում.
3 ճանապարհների լուսավորություն.
4 ճանապարհների ջրահեռացում.
5 բակային ճանապարհների ասֆալտապատում:

## 25.Համայնքի հնգամյա զարգացման ծրագրեր

Ելնելով համայնքի զարգացման ռազմավարական նպատակներից՝ Սպիտակ համայնքի զարգացման 2022-2027 թվականների հիմնական գերակայություններն են.

Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, այն հասանելի դարձնել համայնքի բնակիչներին:

Համայնքի ֆինանսական վիճակի բարելավում՝ եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման միջոցով: Քաղաքացիական հասարակության սուբյեկտների համագործակցության ակտիվացում էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման միջոցով:

Հայաստանի և արտերկրի համայքների հետ համագործակցության ընդլայնում, իրականացնել համայնքային ենթակայության կազմակերպությունների շենքերի հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային և տեխնիկական վերազինման աշխատանքներ:

Ապահովել համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում հիմնական վերանորոգման, ջերմամատակարարման վերականգնման և գույքի ձեռքբերման աշխատանքներ՝ աշխուժացնելով համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:

Ապահովել առողջ ապրելակերպի խրախուսումը, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, երիտասարդական ոլորտի մշտական զարգացումը,

Համայնքում պայմաններ ստեղծել փոքր և միջին բիզնեսը զարգացնելու ուղղությամբ, նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ նվազեցնելով գործազրկության մակարդակը:

Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր՝ նպաստելով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը:

Նպաստել համայնքի տարածքում գտնվող բնակելի շենքերի, համայնքային սեփականություն համարվող շենքերի և շինությունների պահպանմանը, շահագործմանը և նորոգմանը:

Կատարել կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում՝ ավելացնելով բակային խաղահրապարակների քանակը, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելով համայնքի բնակչության մշակութային կյանքի և ազատ ժամանցի, հանգստի կազմակերպման ուղղությամբ: Իրականացնել համայնքի լուսավորության արտաքին ցանցի արդիականացում:

Իրականացնել համայնքի կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ՝ նպաստելով շրջակա բնական միջավայրի պահպանմանը:

Ոռոգման ներհամայնքային համակարգի վերանորոգում, նոր համակարգերի անցկացում:

Ներդնել աղբահանման վճար վճարողների հաշվառման արդյունավետ համակարգ, ինչպես նաև բարելավել աղբահանության վճարների գանձման աշխատանքները:

Իրականացնել քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունն ու կիրառումը:

Իրականացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների մշակում:

# 26.Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում

Աղյուսակ 3.1.1 Համայնքի 2022-2027թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը.

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2022թ. նախատեսված | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ. | 2025թ. կանխ. | 2026թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 1 | 2 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | **1521437,7** | **1733948,4** | **747263,4** | **765063,4** | **781863,4** |
| I. | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **1482337,7** | **1688948,4** | **599263,4** | **715063,4** | **729863,4** |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | **229771,5** | **279585,0** | **281200,0** | **289000,0** | **296300,0** |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 67718,5 | 77365,0 | 78000,0 | 84000,0 | 87500,0 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 3306.5 | 1800.0 | 1500.0 | 1000.0 | 500.0 |
| | Հողի հարկ | 11 358,0 | 5 000,0 | 4 500,0 | 3 000,0 | 2 000,0 |
| | Անշարժ գույքի հարկ | 53054.0 | 70565.0 | 72000.0 | 80000.0 | 85000.0 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 145682,0 | 185649.0 | 186000 | 187000 | 190000 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 145682,0 | 185649.0 | 186000 | 187000 | 190000 |
| 1.3 | Տեղական տուրքեր | 10 571,0 | 10 571.0 | 11 000.0 | 11 500.0 | 12000.0 |
| 1.4 | Պետական տուրքեր | 5 800,0 | 6000,0 | 6 200.0 | 6500.0 | 6800.0 |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | |
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | **1166088,7** | **318000,0** | **20000,0** | **325000,0** | **330000,0** |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 1 055 508,3 | 058000.0 | 60000.0 | 065000.0 | 070000.0 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 1 052 410,2 | 056500.0 | 058500.0 | 063500.0 | 068500.0 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 3 098,1 | 1500.0 | 1500.0 | 1500.0 | 1500.0 |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 2.4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 110580,4 | 260000,0 | 260000,0 | 260000,0 | 260000,0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 3. | **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*** | **86477,5** | **91363,4** | **98063,4** | **101063,4** | **101563,4** |
| 3.1 | Տոկոսներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3.2 | Շահաբաժիններ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 18 973,5 | 19413,4 | 19413,4 | 19913,4 | 19913,4 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 18 060,1 | 18500,0 | 18500,0 | 19000 | 19000 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 913,4 | 913,4 | 913,4 | 913,4 | 913,4 |
| 3.4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում | 2 890,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 2 890,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3.5 | Վարչական գանձումներ | 59 964,0 | 65800,0 | 72500,0 | 75000,0 | 75500,0 |
| | Տեղական վճարներ | 6 650,0 | 6800,0 | 7000,0 | 8000,0 | 8500,0 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 3 000,0 | 3000,0 | 2500,0 | 2000,0 | 1000,0 |
| | Աղբահանության վճար | 31 114,0 | 34000,0 | 38000,0 | 40000,0 | 41000,0 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | 19 200,0 | 22000, | 25000,0 | 25000,0 | 25000,0 |
| 3.6 | Մուտքեր տույժերից, տուգանքներից | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | |
| 3.7 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 3.8 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 3.9 | Այլ եկամուտներ* | 4050,0 | 4050,0 | 4050,0 | 4050,0 | 4050,0 |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 272735,0 | 200000,0 | 200000,0 | 220000,0 | 220000,0 |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 4050,0 | 4050,0 | 4050,0 | 4050,0 | 4050,0 |
| II. | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | 39100,0 | 45000,0 | 48000,0 | 50000,0 | 52000,0 |
| 1. | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | |
| 2. | Պաշարների իրացումից մուտքեր | | | | | |
| 3. | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| 4. | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | 39100,0 | 45000,0 | 48000,0 | 50000,0 | 52000,0 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| III. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | **241886,9** | **0** | **0** | **0** | **0** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | | | | | |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | |
| 2.5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | |
| 2.6 | Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում | | | | | |
| | որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | |

(*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

**Աղյուսակ 4.1.2 Ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման.**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | Ընդամենը |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝ | **1762430,8** | **1733948,4** | **1747263,4** | **1765063,4** | **1781863,4** | **8790569,4** |
| Ա. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | **1385390,2** | **1428948,4** | **1439263,4** | **1455063,4** | **1469863,4** | **7178528,8** |
| 1.1 | Աշխատանքի վարձատրություն, որից | 357304,6 | 357304,6 | 360000,0 | 365000,0 | 370000,0 | 1809609,2 |
| | - Աշխատավարձեր և հավելավճարներ | 357304,6 | 357304,6 | 360000,0 | 365000,0 | 370000,0 | 1809609,2 |
| 1.2 | Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | 363376,1 | 410388,7 | 418007,3 | 408443,4 | 418243,4 | 2018458,9 |
| | -Գործառնական և բանկային ծառ. ծախսեր | 5380,0 | 5380,0 | 5380,0 | 5380,0 | 5380,0 | 26900,0 |
| | - Էներգետիկ ծառայություններ | 69765,9 | 72000,0 | 73 000.0 | 75 000.0 | 75 000.0 | 363765,9 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | - Առողջապահական և լաբորատոր նյութեր | 380,0 | 380,0 | 380,0 | 380,0 | 380,0 | 1900,0 |
| | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1589,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 9589,0 |
| | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 41882,1 | 41882,1 | 41882,1 | 41882,1 | 41882,1 | 209410,5 |
| 1.3 | Տոկոսավճարներ | | | | | | |
| 1.4 | **Սուբսիդիաներ**, այդ թվում | 343636,1 | 420636,1 | 420636,1 | 421000,0 | 421000,0 | 2026908,3 |
| | - Սուբսիդիաներ պետական (համայնքային) կազմ.-ին | 343636,1 | 420636,1 | 420636,1 | 421000,0 | 421000,0 | 2026908,3 |
| | - Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) կազմակերպություններին | | | | | | |
| 1.5 | **Դրամաշնորհներ**, այդ թվում | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 10000,0 |
| | - Ընթացիկ դրամաշնորհներ | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 10000,0 |
| | - Կապիտալ դրամաշնորհներ | | | | | | |
| 1.6 | **Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ** | 20620,0 | 20620,0 | 20620,0 | 20620, | 20620,0 | 103100,0 |
| | - Սոցիալական ապահովության նպաստներ | | | | | | |
| | - Սոցիալական օգնության նպաստներ | 20620,0 | 20620,0 | 20620,0 | 20620,0 | 20620,0 | 103100,0 |
| | - Կենսաթոշակներ | | | | | | |
| 1.7 | **Այլ ծախսեր** | 298452,4 | 218000,0 | 218000,0 | 238000,0 | 238000,0 | 1210452,4 |
| | - Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին | 18379,0 | 15000,0 | 15000,0 | 15000,0 | 15000,0 | 78379,0 |
| | -Պարտադիր վճարներ | 6444,0 | 3000,0 | 3000,0 | 3000,0 | 3000,0 | 18444,0 |
| | - Այլ ծախսեր | | | | | | |
| | - Պահուստային միջոցներ | 273629,4 | 200000,0 | 200000,0 | 220000,0 | 220000,0 | 1113629,4 |
| Բ. | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | | |
| 1.1 | **Հիմնական միջոցներ**, այդ թվում | **650670,0** | **505000,0** | **508000,0** | 530000,0 | 532000,0 | 2725670,0 |
| | **Շենքեր և շինություններ**, որից | **571317,9** | **413000,0** | **400000,0** | **412000,0** | **434000,0** | **2230317,8** |
| | - Շենքեր և շինությունների ձեռքբերում | | | | | | |
| | - Շենքեր և շինությունների կառուցում | 519193,2 | 363000,0 | 350000,0 | 362000,0 | 374000,0 | 1968193,2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | - Կոմունալ ծառայություններ որից | 57056,3 | 58000,0 | 58000,0 | 58000,0 | 58000,0 | 289056,3 |
| | - Կապի ծառայություններ | 6106,3 | 6110,0 | 6110,0 | 6110,0 | 6110,0 | 30546,3 |
| | - Ապահովագրական ծախսեր | 1180,0 | 1300,0 | 1300,0 | 1300,0 | 1300,0 | 6380,0 |
| | - Գույքի և սարքավորումների վարձակալություն | 2290,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 10290,0 |
| | -Արտագերատեսչական ծախսեր | 356,0 | 356,0 | 356,0 | 356,0 | 356,0 | 1780,0 |
| | - Ներքին գործուղումներ | 420,0 | 420,0 | 420,0 | 420,0 | 420,0 | 2100,0 |
| | - Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 1080,0 | 1080,0 | 1080,0 | 1080,0 | 1080,0 | 5400,0 |
| | -Վարչական ծառայություններ | 3000,0 | 3000,0 | 3000,0 | 3000,0 | 3000,0 | 15000,0 |
| | - Այլ տրանսպորտային ծախսեր | | | | | | |
| | - Համակարգչային ծառայություններ | 4316,2 | 4316,2 | 4316,2 | 4316,2 | 4316,2 | 21581,0 |
| | - Աշխատակազմի մասնագ. զարգ. ծառայություններ | 1600,0 | 1000,0 | 1000,0 | 1000,0 | 1000,0 | 5600,0 |
| | - Տեղեկատվական ծառայություններ | 1621,0 | 1621,0 | 1621,0 | 1621,0 | 1621,0 | 8105,0 |
| | - Կառավարչական ծառայություններ | 7340,0 | 7340,0 | 7340,0 | 7340,0 | 7340,0 | 36700,0 |
| | - Ներկայացուցչական ծախսեր | 14415,5 | 10000,0 | 10000,0 | 10000,0 | 10000,0 | 54415,5 |
| | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 30784 | 30784 | 34784,0 | 34784,0 | 34784,0 | 165920,0 |
| | - Մասնագիտական այլ ծառայություններ | 20903,0 | 20903,0 | 20903,0 | 20903,0 | 20903,0 | 104515,0 |
| | - Շենքերի և կառ.-ի ընթացիկ նորոգում և պահպանում | 50287,8 | 90287,8 | 90906,4 | 77236,1 | 82036,1 | 390754,2 |
| | - Մեքեն. և սարք.-ի ընթացիկ նորոգում և պահպանում | 4335,0 | 4335,0 | 4335,0 | 6335,0 | 11335,0 | 30675,0 |
| | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 6737,4 | 6000,0 | 6000,0 | 6000,0 | 6000,0 | 30737,4 |
| | - Գյուղատնտեսական ապրանքներ | | | | | | |
| | - Վերապատրաստման և ուսուցման նյութեր | | | | | | |
| | - Տրանսպորտային նյութեր | 30550,6 | 39893,6 | 41893,6 | 42000,0 | 42000,0 | 196337,8 |
| | - Շրջակա միջավայրի պահպ.-ան և գիտական նյութեր | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | - Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում | 52124,6 | 50000,0 | 50000,0 | 50000,0 | 60000,0 | 262124,6 |
| | Այլ հիմնական միջոցներ | | | | | | |
| | **Մեքենաներ և սարքավորումներ**, որից | **70246,7** | **70000,0** | **86000,0** | **96000,0** | **76000,0** | **398246,7** |
| | - Տրանսպորտային սարքավորումներ | 46000,0 | 30000,0 | 50000,0 | 50000,0 | 30000,0 | 206000,0 |
| | - Վարչական սարքավորումներ | 3046,7 | 5000,0 | 4000,0 | 6000,0 | 6000,0 | 24046,7 |
| | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 21200,0 | 35000,0 | 32000,0 | 40000,0 | 40000,0 | 168200 |
| | **Այլ հիմնական միջոցներ** | **9105,4** | **22000,0** | **22000,0** | **22000,0** | **22000,0** | **97105,4** |
| | -Աճեցվող ակտիվներ | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 10000,0 |
| | -Նախագծահետազոտական ծախսեր | 7105,4 | 20000,0 | 20000,0 | 20000,0 | 20000,0 | 87105,4 |
| 1.2 | Պաշարներ | | | | | | |
| 1.3 | Բարձրարժեք ակտիվներ | | | | | | |
| 1.4 | Չարտադրված ակտիվներ, այդ թվում | | | | | | |
| | - հող | | | | | | |
| | - այլ չարտադրված ակտիվներ | | | | | | |
| | - Պահուստային միջոցներ | | | | | | |

## 27.ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Սպիտակ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2022-2027թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի բաժինները և ծառայությունները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, Լոռու մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք տարիների գործունեության ուղեցույցը: 2022-2027 թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն: Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: